

Հեռագիր

Վեհափառ Տէր,

Նախկին Սուրբ Խաչ համայնքէն մեծամասնութիւն մը զգուած ըմբոստ դեկաւարներու ընթացքէն Առաջնորդարանի հեղինակութեան ներքեւ կազմակերպուած կ'աշխատին: **STOP**

Սուրբ Պատարագ եւ հոգեւոր մատակարարութիւն ծրագրուած են կանոնաւորաբար թեմական Խորհուրդէն նշանակուած ճիսական Խորհուրդի դեկաւարութեամբ որոնք բոլորն ալ անդամներ են լուծուած համայնքին: **STOP**

Վեհիդ հասնող տասնեակներով ստորագրուած հեռագիրներուն ծախքը կը հոգացուի միայն որոշ անձանց կողմէ: **STOP**

Անպատուաբեր արարքներով ըմբոստներու խմբակը կը ջանայ կացութիւնը վատթար ներկայացնել եւ ինքնիշխան դառնալ Վեհիդ ապաւինելով: **STOP**

Սխալ պիտի ըլլայ Մայր Աթոռի միջամտութիւնը թեմական վարչական գործերուն մէջ որեւէ խոստում կամ կարգադրութիւն ընելով: **STOP**

Կրկին կը խնդրենք որ Ձերդ Սրբութիւնը անտեսէ պաշտօնագուրկ անձանց լրատուութիւնը եւ վստահի Երեսփոխանական ժողովի եւ թեմական իշխանութեանց կարգադրութեանց: **STOP**

Թեմական Խորհուրդի մինչեւ Մարտ 19 նիստին մէջ տրուած որոշումները եւ արձանագրութիւնները Վեհիդ պիտի ուղարկուին շուտով: **STOP**

Շնորհակալութեամբ ստացանք Վեհիդ Զատկուան պատգամը: **STOP**

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ